## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ս. Էջմիածին**

**Ձերդ Սրբության գահակալության 33-րդ տարեդարձի բարեպատեհ առիթով, հանուն մեր եղբայրության և համայնքին, կներկայացնենք մեր հարգալից և սրտագին շնորհավորանքները: Ջերմորեն կաղոթենք, որ Ամենազորը պարգևե Ձերդ Սրբության երկար և երջանիկ կյանք, բարգավաճում և անսասանություն մայր երկրին ու Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռին:**

**ԵՂԻՇԵ**
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ

**Երուսաղեմ,**
**30 սեպտեմբերի 1988 թ.**



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ս. Էջմիածին**

Վեհիդ գահակալության երեսուներեքերորդ տարեդարձին առիթով հաճեցեք ընդունիլ մեր և համայնքիս սրտագին շնորհավորությունները և արևշատության մաղթանքները:

Խորին հարգանոք՝

**ՇՆՈՐՀՔ**
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ

Ստամբուլ,
23 սեպտեմբերի 1988 թ.